տեսնուի հարուստը եկեղեցիէն հեռու և աղքատը միայն եկեղեցի յաճախելու վրայ ըլլալով և արդեօք այս ընթացքով հասնելու է այն վիճակին, որ մեր ազգասէր եկեղեցականներն ալ պարտաւորին աղօթելու՝ որ հայերը չը հարստանան, տեսնելով որ հարստութիւնը անոնց սրտէն հեռացնելու և պաղեցնելու վրայ է կրօնասիրութիւնն ու բարեպաշտութիւնը.

ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ.

Շատ ծանր և փափուկ է այս մասին վրայ խորհրդածութիւն ընելը, և ասկէ առաջ գրուած յօդուածներէն ամենէն դժուարը.

Նպատակնիս մեր ազգը շուտոնակ գովաբանելով ինքզինքնիս խաբել չէ, նաև յանիրաւի պարսաւելով քաջալերութիւննիս կոտրել և յուսահատութեան՝ ալ պատճառ ըլլալը խելք չէ, այլ ինչ է 'էութիւնը՝ պէտք է զայն գրել. այս մասին ինչպէս ասկէ առաջ գրուած յօդուածներուն մէջ ըսածնիս ոչ անձնական՝ այս ինքն այս կամ՝ այն անհատի համար է, և ոչ ընդհանուր այլ այն մեծագոյն մասին կը վերաբերէր՝ որոնցմէ ոմանք այս ինչ պակասութեան ենթակայ են, միւսն ալ այն ինչ ախտին կամ՝ թերութեան, որոյ մասին եթէ Անգղիացւոց օրինակին հետևելու ըլլանք ինքզինքնիս ուղղելով ու բարւոքելով՝ արդարև մեր ազգը մեծ յառաջադիմութիւն ըրած կը համարուի.

Ասիական ազգերուն մէջ Հայոց ազգին վաճառականութեան մասին ունեցած յաղթանակը հռչակաւոր է, որք Ասիոյ սահմաններէն ելնելով իրենց վաճառականութիւնը մինչև Հոլանտայի և Իտալիոյ վաճառաշահ քաղաքները զարմանալի կերպով տարածեր են, որոյ մասին ուրիշ անգամ մանրամասնաբար խօսիլ կը խոստանամք. Հայոց վաճառականութեան մէջ տաղանդաւոր ըլլալը անուրանալի է, ասկից զատ Հայը վաճառականութեան մէջ հաւատարիմ է և պարկեշտ, խնայող, աշխատասէր և մանրախնդրութեան տէր, զրկողութեամբ ապրելու վարժուած, որոնց ամենն ալ վաճառականութիւնը կը յառաջացնեն և կը բարգաւաճեն.

Ուրեմն ի՞նչ գաղտնի պատճառ կայ՝ որ արգելք կըլլայ մեր յառաջադիմութեան այս ճիւղին մէջ.

Եթէ քանի մ'ամիս Մանչէսթըրի մէջ ազգային մը ձեռք դիւրութեամբ կը տեսնայ և կը համոզուի որ՝ ասոր միակ և գլխաւոր պատճառը չար նախանձն է. Բնական է որ տեղացին՝ այս ինքն Անգղիացին Հայ վաճառականի մը վրայ տեղեկութիւն խնդրելու հարկաւորի, որն որ իւր ազգականներուն հարցափորձ պիտի ընէ և ծանօթանայ. ափսոս այն խեղճ հայուն գլխուն որուն վիճակին համար իր ազգակիցներէն տեղեկութիւն կուզուի. որոնցմէ ոմանք Կիկերոն կը կըտրին, ոմանք լռութեամբ և զանազան շարժմունքներով կուզեն խեղճին տունը քանդել. կան անանկ հայրենասէրներ որ՝ կը մտածեն թէ իրենք առաջին կարգի տեղը բռնած են՝ ինչո՞ւ այս ինչ մարդն ալ իրենց վիճակին մերձենայ, միւսներն ալ նիւթականին վրայ մտածելով՝ կըսեն թէ՝ նոր եկող կամ՝ ասանկները եթէ քաջալերութիւն գտնեն, օրէ օր կը շատնան և իրենց վաստակը կը պակսի. Հայն զՀայը պարսաւելը այնքան ընդհանուր եղած է որ՝ Անգղիացիք անգամ գիտեն և կը խրատեն՝ որ այս պակասութենէն ետ կենան, բայց ի զուր. Մանչէսթըրի մէջ Հայէն ի զատ շատ ազգեր կան, որք ընդհանրապէս զիրար կը պաշտպանեն և կը գովեն. կը պատահի որ մէջերնին սնանկութիւն կը պատահի, այն ժամանակ կը պաշտպանեն սնանկացողը հաստատելով թէ անմեղ է և խեղճ. իսկ եթէ Հայոց վաճառականաց մէջէն սնանկութիւն կը պատահի, իր ազգակիցները կը տարածայնեն անոր անունը, ուրախակից լինելով անոր պակասութիւնները կը հրատարակեն և անոր դէմ իբրև ախոյեան կը պատերազմին, իբր թէ իրենք միայն այն մասին անարատ մնան*).

(Մնացեալն ի յաջորդ թերթին).

Օրագիր.

---

(*) Յօդուածագրին ներկայ ակնարկութիւնը եւս անհիմն է. իսկ ոճութիւնը շատ թերի եւ կցկտուր:

Ծ. Խմբ. Արարատայ.

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.